# «Ջավախքի վրիժառուներ» անունով հայկական կազմակերպություն չի եղել եւ չկա

## «Ա-ԻՆՖՈ» գործակալությունն ունի՞ ռուսակա՞ն ծագում

Վրաստանի խորհրդարանի միջազգային հարցերով հանձնաժողովի փոխնախագահ, ազգությամբ հայ պատգամավոր Գիվի Շուգարովը, վկայակոչելով Վրաստանում Հայաստանի դեսպանությանը, հայտարարել է, որ գոյություն չունի «Ա-ԻՆՖՈ» անունով հայկական լրատվական գործակալություն: Հոկտեմբերի 1-ին այս գործակալությունն Ախալքալաքից հաղորդել էր, թե Պանկիսի կիրճում չեչեն գրոհայիններին ոչնչացնելու վերաբերյալ ՌԴ նախագահ Պուտինի հայտարարությունից հետո չեչեն գրոհայինները սկսում են հեռանալ այնտեղից եւ հաստատվել ավելի ապահով վայրերում, որտեղ այդպիսի վայր նախընտրել են Սամցխե-Ջավախք նահանգը: Ըստ «Ա-ԻՆՖՈ»-ի, չեչեն գրոհայիններ կան Բակուրիանիում, Աբասթումանում, Ախալցխայում, Վարձիայի ձորում, Ախալքալաքի եւ Ծալկայի շրջանները բաժանող Սամսարի լեռներում, Ախալցխա է ժամանել նաեւ Գելաեւը եւ հանդիպել տեղի հանցագործ աշխարհի ներկայացուցիչների հետ:

Երեկ Սամցխե-Ջավախքում Վրաստանի նախագահի լիազոր ներկայացուցիչ Թեյմուրազ Մոսիաշվիլին հերքել էր չեչենների Թուրքիա անցնելու հավանականության մասին տեղեկատվությունը:

Գիվի Շուգարովը «Ինտեր-պրես» վրացական գործակալությանն ասել է, թե «Ա-ԻՆՖՈ»-ն ունի ռուսական ծագում, Ռուսաստանից Վրաստանի նկատմամբ կարելի է սպասել քաղաքական լուրջ սադրանքներ, եւ Մոսկվան շահագրգռված է Վրաստանում ստեղծելու եւս մեկ թեժ գոտի: Հայաստանի շահերից չի բխում Ջավախքում թեժ գոտի ստեղծելը, ասել է Շուգարովը:

Սեպտեմբերի 24-ի առավոտյան Ախալքալաքում եւ Նինոծմինդա քաղաքների շենքերի պատերին փակցվել էր «Ջավախքի վրիժառուներ» կազմակերպության հայտարարությունը, որում մասնավորապես ասվում էր. «Մենք այլեւս չենք հանդուրժի ազգայնամոլ վրաց իշխանավորների որեւէ հակահայ գործողություն, եւ պատասխանը կլինի հուժկու ու անվրեպ: Զգուշացնում ենք ձեզ վերջին անգամ՝ եղեք ողջամիտ եւ զգույշ, հանգիստ թողեք Ջավախք աշխարհը: Եթե մոռացել եք, հեստայսու հիշեք ու իմացեք՝ Ջավախքն ունի իր տերն ու պաշտպանը: Եվ եթե չհասկանաք՝ մեղադրեք ինքներդ ձեզ»:

Թե ով է տարածել նման սադրանքը՝ ռուսակա՞ն կողմը, թե՞ վրացական, դժվար է ասել: **«Ազգն»** այս օրերին իրազեկ աղբյուրներից ճշտել է, որ Ջավախքում «Ջավախքի վրիժառուներ» անունով հայկական կազմակերպություն չի եղել եւ չկա:

Թ. Հ.



# Բուշը, Իրաքը եւ ՄԱԿ-ը

Այս վերնագիրն է կրում Փարիզի «Մոնդ» օրաթերթի խմբագրականը, որտեղ վերլուծվում է ՄԱԿ-ում Իրաքի շուրջը ԱՄՆ-ի ծավալած «քաղաքական ճակատամարտը»: Ըստ «Մոնդի», տվյալ գործում Վաշինգտոնը եւ ՄԱԿ-ը մասամբ խաղարկում են իրենց հեղինակությունը:

**«Ազգն»** արդեն տեղեկացրել է Վիեննայում հոկտեմբերի 1-ին ՄԱԿ-ի եւ Իրաքի ձեռք բերած համաձայնության մասին, որով միջազգային տեսուչներին թույլատրվում է առանց նախապայմանի վերադառնալ Իրաք: Բայց ԱՄՆ-ը շարունակում է պահանջել ՄԱԿ-ի նոր, ավելի խիստ բանաձեւի ընդունում, որը կթույլատրեր ուժ գործադրել Իրաքի դեմ, եթե Անվտանգության խորհրդի անդամներից մեկն անբավարար համարեր նրա զիջումները:

Մեծ Բրիտանիան համամիտ է սրան: Անվտանգության խորհրդի մյուս 3 անդամները՝ Չինաստանը, Ֆրանսիան եւ Ռուսաստանը դեմ են: Փարիզն առաջարկում է նախ Իրաք գործուղել տեսուչներին, պարզել Սադդամ Հուսեյնի դիտավորությունները, եւ զենքի ստուգումների ընթացքում իշխանությունների ընդդիմագործության դեպքում Անվտանգության խորհրդում որոշում ընդունել ուժի գործադրման վերաբերյալ:

Առաջիկա օրերին ՄԱԿ-ում քննարկումները շարունակվելու են: «Մոնդի» խմբագրականում ընդգծվում է, որ Ջորջ Բուշի դիրքերն ավելի ամուր կլինեին, եթե տվյալ հարցում նա «կեղծավորությանը մերժեցող» խոսքեր չօգտագործեր: Այսպես, սեպտեմբերի 12-ին նա ՄԱԿ-ի ընդհանուր ժողովում հայտարարեց. «Իրաքի գործը ցույց կտա, թե ՄԱԿ-ի գոյությունն արդյոք իմաստ ունի՞»:

Այսինքն, Բուշին հետաքրքրում է միայն «Իրաքի գործը» եւ ոչ թե մյուս գործերը կամ ՄԱԿ-ի ապագան: «Մոնդը» հիշեցնում է, որ Անվտանգության խորհրդի ընդունած մի շարք բանաձեւեր մինչեւ օրս չեն կիրառվում հենց ԱՄՆ-ի ընդդիմության կամ անտարբերության պատճառով: ՄԱԿ-ում Պաղեստինյան ինքնավարության ներկայացուցիչն ընդգծում է, որ եթե Իրաքի վերաբերյալ ընդունված բանաձեւերից չեն կատարվում 16-ը, ապա ամեն օր ոտնահարվում են իսրայելա-պաղեստինյան հակամարտությանը վերաբերող 25 բանաձեւեր: Ջորջ Բուշը երբեւէ չի դատապարտել Այսրհորդանանում իսրայելական նոր ավանների ստեղծումը:

Նույնպիսի օրինակներ կարելի է բերել նաեւ Աֆրիկայից, Ասիայից եւ այլ վայրերից: Արաբական աշխարհում եւս ՄԱԿ-ը երկակի չափանիշների քաղաքականություն է վարում՝ ելնելով այս կամ այն մեծ տերության շահերից: Այս ամենը վնասում է ինչպես ՄԱԿ-ի, այնպես էլ ԱՄՆ-ի հեղինակությանը:

ՀԱՄԱՌՈՏ

## «Վիրքի» անդամ Ֆեդյա Թորոսյանի ձերբակալությունը քաղաքական նպատակներ է հետապնդում

ԱԽԱԼՔԱԼԱՔ, 3 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ - Ա-ԻՆՖՈ: Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների շրջանում մեծ հուզում է առաջացրել 1988 թվականից Ջավախքի հասարակական-քաղաքական կյանքի ակտիվ մասնակից, «Ջավախք» ժողովրդական շարժման հիմնադիրներից, «Վիրք» կուսակցության անդամ Ֆեդյա Թորոսյանի ձերբակալությունը: Պաշտոնապես Ֆ. Թորոսյանի ձերբակալությունը պատճառաբանվում է Ախալքալաքի շրջանի էլեկտրացանցի տնօրեն եղած ժամանակ կատարված ֆինանսական թղթատարության անփութությամբ: Սակայն Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչները գտնում են, որ Թորոսյանի ձերբակալությունը քաղաքական նպատակներ է հետապնդում:

## Վրաստանը կարող է հակաքրեական գործողություններ իրականացնել Հարավային Օսիայում

Շիդա Քարթլիի շրջանում առկա ծանր քրեածին իրավիճակը պահանջում է մի շարք միջոցառումների անցկացում Վրաստանի ՆԳՆ ուժերի օգնությամբ, լրագրողներին ասել է Վրաստանի ազգային անվտանգության խորհրդի փոխքարտուղար Ջեմալ Գախոկիձեն, հաղորդում է «Ինտերֆաքսը»: «Այդ տարածաշրջանում պատշաճ կարգուկանոն հաստատելու մասին կա Վրաստանի նախագահի հատուկ հանձնարարականը», ասել է Գախոկիձեն: Վրացիները դե ֆակտո անկախ Հարավային Օսիային տալիս են երկու անուն՝ Շիդա Քարթլի կամ Սամաչաբլո:

## Ռուսաստանը կստեղծի նավթի ռազմավարական պաշար

Ռուսաստանում քննարկվում է առաջիկա 2-3 տարում նավթի ռազմավարական պաշար ստեղծելու հնարավորությունը: Ֆրիպորտում (Տեխասի նահանգ) հայտարարել է նավթի ռազմավարական պահեստարան այցելած ՌԴ էներգետիկայի նախարար Իգոր Յուսուֆովը, որը Հյուսթոնում մասնակցում է ռուս-ամերիկյան էներգետիկ առաջին գագաթաժողովի աշխատանքներին: Նախարարը նշել է, որ ի տարբերություն ԱՄՆ-ի, Ռուսաստանը ծրագրում է նավթի ռազմավարական պաշար ստեղծել առաջին հերթին ոչ թե սեփական կարիքների, այլ սուր անհրաժեշտության դեպքում ուրիշ երկրների նավթի պահանջարկը բավարարելու համար: ՌԻԱ գործակալությունը տեղեկացնում է, որ ենթադրվում է վառելիքի ռազմավարական պաշարն ստեղծել առաջիկա տարիներին Ռուսաստանում նավթահանույթի կտրուկ ավելացման հաշվին:

## Եվրոպայում տասնյակ ռուս կավատներ են ձերբակալվել

Եվրոպական մի շարք երկրներում կանանց ընդհատակյա առեւտրի կասեցման նպատակով անցկացված խոշոր գործողության ընթացքում ձերբակալվել են 80 անձինք, որոնց մեջ զգալի թիվ են կազմում ռուսները: BBC-ն հաղորդում է, որ քննությունն անցկացվել է Իտալիայի ոստիկանության ղեկավարությամբ: «Արեւածաղիկ» պայմանական անունով գործողությանը մասնակցել են 1000-ից ավելի իտալացի ոստիկաններ, ինչպես նաեւ Ավստրիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Ֆրանսիայի, Լեհաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Բելառուսի իրավապահները:

Եվրոպական ոստիկանության՝ Եվրոպոլի զեկուցագրում նշվում է, որ զբոսաշրջային գործակալությունների, ավտոբուսային ընկերությունների եւ հյուրանոցների մի ամբողջ ցանց կանանց գայթակղելով հասցնում էր Արեւմտյան Եվրոպա, ապա զրկում փաստաթղթերից եւ ստիպում զբաղվել պոռնկությամբ:

Զեկուցագրի հեղինակների կարծիքով, ռուսական մաֆիան վերահսկել է ուկրաինական ու արեւմտաեվրոպական զբոսաշրջային մի շարք գործակալությունների եւ հյուրանոցների գործունեությունը: Իտալացի իրավապահների տվյալներով, ռուսական եւ իտալական հանցախմբերը գործել են համատեղ:

2002 թ. ապրիլին անցկացված ոստիկանական գործողության առաջին փուլում ձերբակալվել էին 100-ից ավելի կավատներ, այդ թվում իտալական եւ ալբանական հանցախմբերի անդամներ:

# «Մոսադի» պետը գաղտնի հանդիպել է Արաֆաթի իրավահաջորդի հետ



Իսրայելի հետախուզության՝ «Մոսադի» ղեկավար Էֆրաիմ Հալեւին գաղտնի հանդիպում է ունեցել Պաղեստինյան ինքնավարության ներկայացուցչի հետ, որը համարվում է Յասեր Արաֆաթի հավանական իրավահաջորդը: Իսրայելական «Եդիոտ Ահրոնոտ» թերթը վկայակոչելով՝ Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ հանդիպումը տեղի է ունեցել Քաթարում:

Պաղեստինյան ինքնավարության եւ Քաթարի ներկայացուցիչները հերքել են այդ տեղեկատվությունը: Սակայն իսրայելցի դիվանագետներից մեկը հավաստել է, որ 2 ամիս առաջ Հալեւին Պարսից ծոցի պետություններից մեկում իրոք հանդիպում է ունեցել մի բարձրաստիճան պաղեստինցու հետ: «Եդիոտ Ահրոնոտի» տվյալներով, խոսքը Պաղեստինյան ինքնավարության ներկայացուցիչ Մահմուդ Աբասի մասին է, որը հայտնի է նաեւ Աբու Մազեն անունով:

Իսրայելական մեկ այլ աղբյուրի համաձայն, Հալեւին Պաղեստինյան ինքնավարությունում տիրող իրավիճակը քննարկել է պաղեստինցի մի քանի պաշտոնյաների հետ, բայց Մահմուդ Աբասը նրանց մեջ չի եղել:

# Պաղեստինցիներն արաբական երկրներին կոչ են անում ԱՄՆ-ից հետ կանչել դեսպաններին

## Արաֆաթ. Երուսաղեմն Իսրայելի մայրաքաղաք ճանաչելը «աղետ է»

Հոկտեմբերի 2-ին ԱՄՆ Կոնգրեսում Երուսաղեմն Իսրայելի մայրաքաղաք ճանաչող օրենքի ընդունումից հետո Պաղեստինի ազատագրության ժողովրդավարական ճակատի (ՊԱԺՃ) քաղբյուրոյի անդամ Թայսիր Խալեդը հայտարարությամբ արաբական եւ մահմեդական պետություններին կոչ արեց, որպես բողոքի նշան, Վաշինգտոնից հետ կանչել իրենց դեսպաններին: Ըստ ՌԻԱ գործակալության, պաղեստինցի բարձրաստիճան պաշտոնյան նշել է, որ Կոնգրեսի տվյալ քայլը Պաղեստինի, ինչպես նաեւ արաբական ու մահմեդական մյուս պետությունների դեմ ԱՄՆ-ի հարաճուն ագրեսիվության դրսեւորումն է, միջազգային իրավունքի ոտնահարման վկայություն: Խալեդի խոսքերով, Մերձավոր Արեւելքում խաղաղություն եւ անվտանգություն չեն լինի «առանց արաբական Երուսաղեմի»:

Պաղեստինյան ինքնավարության ղեկավար Յասեր Արաֆաթն իր հերթին դատապարտել է Երուսաղեմն Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու Կոնգրեսի որոշումը՝ անվանելով «աղետ, որը չի կարելի լռության մատնել»: Նրա խոսքերով, այդ որոշմանը չեն կարող համաձայնել ոչ մահմեդականները, ոչ էլ քրիստոնյաները: Ըստ Արաֆաթի, Երուսաղեմի հարցը վերաբերում է ամբողջ միջազգային ընկերակցությանը: Նա նշեց, որ Պաղեստինյան ինքնավարության ղեկավարությունը քայլեր կձեռնարկի տվյալ որոշման կատարումը կասեցնելու համար:

Պ. Ք.

# Ալ Գորը վերադառնում է



ԱՄՆ նախկին փոխնախագահ, նախագահական վերջին ընտրություններում Ջորջ Բուշ կրտսերի գլխավոր ախոյան Ալբերտ Գորը կարծես թե վերադառնում է քաղաքական ասպարեզ: Անցյալ շաբաթ հանրապետական վարչակազմի «ռազմատենչ» արտաքին քաղաքականությունը դատապարտելուց հետո նա հոկտեմբերի 2-ին գործադիր իշխանություններին պախարակեց երկրի վատթարացող տնտեսական կացության համար: Վաշինգտոնի Բրուքինգս հաստատությունում ելույթ ունենալով, նա լսարանին դիմելով հարցրեց. «Մի՞թե անհրաժեշտ է պատերազմն սկսել ընտրություններից առաջ եւ մի՞թե թույլատրելի է տնտեսությամբ զբաղվել միայն դրանից հետո»:

Փարիզի «Լիբերասիոն» թերթն ընդգծում է, որ Ալբերտ Գորի ելույթն ամրապնդում է նրա կուսակից դեմոկրատների դիրքերը, որոնք փորձում են հանրապետականների հետ բանավեճ ծավալել գլխավորապես գործազրկության եւ սոցիալական օգնության հարցերի շուրջը: Դեմոկրատները երկյուղներ ունեն, որ նոյեմբերի ընտրությունները, որոնց ընթացքում կիսով չափ նորացվելու են Կոնգրեսի զույգ պալատների կազմերը, կավարտվեն իրենց պարտությամբ, եթե իրենք ուշադրությունը բեւեռեն միայն Իրաքի նկատմամբ վարվելիք քաղաքականության վրա:

Դեմոկրատներն ակնկալում են, որ առաջիկա երկու տարում՝ մինչեւ նախագահական նոր ընտրությունները, Գորը կկարողանա փոխվրեժ լուծել Բուշից, որը նախագահ ընտրվեց Ֆլորիդայի նահանգում քվեների երկարատեւ ու վիճահարույց վերահաշվարկներից հետո միայն: Թենեսիի նահանգի նախկին սենատոր Գորը մինչեւ օրս ձեռնպահ է մնացել ընտրությունների արդյունքների մեկնաբանումից:

Պ. Ք.

# Լավագույնը, ինչ կարելի է անել ապագայի համար, ներկան դեպի լավը փոխելն է:




«Գինդ» տպագրատուն. Երևան, Բագրատունյաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը 3000 Ստորագրված է տպագրության 3. 10. 2002 Գինը 100 դրամ